OBERTON

Konstantin
PETROSSIAN "Dialogues" for viblin and cello - 10:45

Levon
CHAUSHYAN String Quartet # 2 - 17:40

Yervand
YERKANYAN "Reflections of Twilight" for instrumental ensemble - 10:10

Ruben
SARGSYAN "Confessionos of Survivors of Der Zor" - 15:30

Vahram
BABAYAN "Hymn" based on the theme B-A-C-H (opus 123) - 15:34

Special thanks to

Musicologist
Margarita Rukhyan
Anna Arevshatian

Sound Engineering and Mixing
Arman Avetisian

English Translations
Lucy Muradian
Roubina Margossian

Design by
"FAINBERG" LLC

www.naregatsi.org

Konstantin

PETROSSIAN

"Dialogues" for violin and cello
Nataliya Litvinova – violin, Sergey Scholz – cello

KONSTANTIN PETROSSIAN was born in Yerevan in 1946. He graduated from the Komitas State Conservatory of Yerevan as a composer /professor G. Yeghiazaryan/.

He has combined social and administrative work with his creative life. Petrossian has been active as part of the Composer's Union of Armenia, the Peace Fund and as a pedagogue. Konstantin Petrossian's repertoire includes symphonic, chamber, vocal and instrumental pieces and well as music for motion pictures and the theater. Many of his works, namely Concerto for Voice and the song Armenia have brought him wide acclaim.

Since 1995, Petrossian lives and works in USA. He is the director of the Cultural Center of Providence and the music director of the city's Armenian Church. Since 1997, Petrossian is also a funding member and the artistic director of the Rhode Island Armenian Music Festival.

His Dialogues for the Violin and the Cello illustrate the composer's drive to create inspiring, lively musical images and structurally new composition. Petrossian's 10 minute piece is a procession of 5 recitatives each in contrasting timbres. In each and every one, the composer introduces a new mood and a new thematic subject. This is a captivating, dynamic dialogue between the violin and the cello that seams to be "about everything".

Կոնստանտին ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Երկխոսություններ» ջութակի և թավջութակի համար
Նատալյա Լիտվինովա – ջութակ, Սերգեյ Շոլց – թավջութակ

Կոնստանտին Պետրոսյանը ծնվել է 1946թ. Երևանում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը /պրոֆ. Գ. Եղիազարյանի դաս./:

Երիտասարդական տարիքից զուգորդել է ստեղծագործությունը հասարակական և վարչական աշխատանքի հետ: Նրա գործունեությունը ծավալվել է Հայաստանի Կոմպոզիտորների միությունում, Խաղաղության ֆոնդում և մանկավարժության ասպարեզում: Կ. Պետրոսյանը հեղինակ է սիմֆոնիկ, խմբերգային, կամերային, գործիքային, վոկալ ստեղծագործությունների, գրել է երաժշտություն կինոյի և թատրոնի համար:
Իր ստեղծագործություններից մի քանիսը, ինչպես, օրինակ՝ Կոնցերտ ծայնի համար, «Հայաստան» երգը/1986/ արժանացել են լայն ճանաչման:
1995թ-ից ապրում և աշխատում է ԱՄՆ-ում:
Նա Պրովիդենս քաղաքի մշակութային կենտրոնի տնօրենն է և հայկական եկեղեցու երաժշտական ղեկավարը: 1997թ-ից «Ռոդ Այլենդի Հայկական երա-ժշտական փառատոնի» հիմնադիրն է և գեղարվեստական ղեկավարը:
Ջութակի և թավջութակի «Երկխոսությունները» ցայտուն կերպով բնորոշում են կոմպոզիտորին, որը ձգտում է արտահայտիչ եռանդուն երաժշտական կերպարների և կոմպոզիցիոն ձևերի ստեղծմանը: 10 րոպեանոց պիեսը տեմպային առումով կոնտրաստային 5 ռեչիտատիվների շղթա է: Նրանցից յուրաքանչյուրի մեջ հեղինակը ներմուծում է նոր տրամադրություն և նոր թեմատիկ նյութ: Դա ջութակի և թավջութակի գործուն զրույց է «ամեն ինչի մասին», որն ընդունակ է իր բովանդակալից բնույթով գրավել ունկնդրին:

www.naregatsi.org

Levon
CHAUSHYAN

String Quartet #2
"Komitas" State String Quartet
Edward Tatevosian – first violin, Hagop Mekinian – second violin
Yasha Papian – viola, Felix Simonian – cello

LEVON CHAUSHYAN was born in 1946. He graduated from the Komitas State Conservatory of Yerevan as a composer /Professor E. Mirzoyan/ and as a pianist /Professor G. Sarajev/.

Chaushyan largely composes for instrumental ensembles. The symphony To the Unknown Soldier written for a large symphonic orchestra, two concertos for the piano and a symphonic orchestra, concerto for the violin and a symphonic orchestra, 4 string quartets, piano trio, sonatas for various instruments as well as many vocal works are a part of his rich repertoire.

In 1984, Chaushyan's second string quartet was selected by the UNESCO Composers' 31st International Convention in Paris as one of the twelve best works of the year. In 1985, it was performed in 10 countries; Bulgaria, Hungary, East Germany, Denmark, Spain, Norway, Portugal, Turkey, Switzerland and Sweden.

Its richness of sound often makes the string quartet sound like an orchestra. In this work, Chaushyan revives the intrinsic possibilities of each instrument and their obertonic essence. It consists of seven different moods which connect as one. 1. Andante 2.Allegro 3. Moderato 4. Moderato 5. Andante 6. Allegro 7. Moderato. According to the author's interpretation these are seven different sides of the same phenomenon which incorporate into a rhythmo-intonational progressive unity.
Chaushyan's quartet is dedicated to E. Tatevosyan, H. Mekinyan, Y. Papyan and F. Simonyan; members of the Komitas State String Quartet.

Լևոն
ՉԱՈՒՇՅԱՆ

Լարային կվարտետ N2
Հայաստանի Կոմիտասի անվան Պետական լարային քառյակ
Էդուարդ Թադևոսյան – 1-ին ջութակ, Հակոբ Սեքինյան – 2-րդ ջութակ,
Յաշա Պապյան – ալտ, Ֆելիքս Սիմոնյան – թավջութակ

Լևոն Չաուշյանը ծնվել է 1946թ. Երևանում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիան երկու մասնագիտությամբ՝ կոմպոզիցիա /պրոֆ. Է. Միրզոյանի դաս./ և դաշնամուր /պրոֆ. Գ. Սարաջևի դաս/:

Նրա ստեղծագործության գլխավոր ոլորտը գործիքային երաժշտությունն է՝ «Անհայտ զինվորին» սիմֆոնիան մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար, 2 կոնցերտ դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար, Կոնցերտ ջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար, 4 լարային կվարտետ, Դաշնամուրային տրիո, սոնատներ տարբեր գործիքների համար, մի շարք վոկալ և խմբերգային ստեղծագործություններ:
Երկրորդ լարային կվարտետի համերգային կյանքը փայլուն ստացվեց: 1984թ. մայիսին Փարիզում ՅՈՒՆԵՍԿՈ-ի կոմպոզիտորների 31-րդ միջազգային համաժողովում Լ. Չաուշյանի Երկրորդ լարային Կվարտետը նշվեց որպես տարվա 12 լավագույն ստեղծագործություններից մեկը և միայն 1985թ-ի ընթացքում հնչեց 10 երկրներում՝ Բուլղարիա, Հունգարիա, ԳԴՀ, Դանիա, Իսպանիա, Նորվեգիա, Պորտուգալիա, Թուրքիա, Շվեյցարիա և Շվեդիա:
Կվարտետի ուշագրավ առանձնահատկությունը նրա հնչյունային ծավալն է: Հաճախ քառյակը հնչում է նվագախմբի պես: Կոմպոզիտորը վերածնում է գործիքների հնչողության ներքին հնարավորությունները՝ բացահայտելով նրանց օբերտոնային էությունը: Միասաս կվարտետի յոթ փոխկապակցված տրամադրությունները կարծես հակադրվում են մեկը մյուսին: 1. Andante, 2. Allegro, 3. Moderato, 4. Moderato, 5. Andante, 6. Allegro moderato, 7. Moderato.
Ըստ հեղինակի մեկնաբանման, դրանք նույն երևույթի յոթ տարբեր կողմերն են: Կվարտետի հատվածները միավորում են ռիթմա-ինտոնացիոն զարգացման միասնությունը:
Լ. Չաուշյանի կվարտետը նվիրված է առաջին կատարողներին՝ Հայաստանի Կոմիտասի անվան պետական լարային քառյակին՝ հետևյալ կազմով՝ Է. Թադևոսյան, Հ. Սեքինյան, Յա. Պապյան, Ֆ. Սիմոնյան:

www.naregatsi.org

Yervand
YERKANYAN

"Reflections of Twilight" for instrumental ensemble
The Odessa Philharmonic's Ensemble for Contemporary Music Sergey Scholz – artistic director, Nataliya Litvinova – violin Sergey Scholz – cello, Marina Shlyakhter – piano, Stanislav Zakorsky – flauto Vladimir Tomaschook- clarinet

YERVAND YERGANYAN was born in Gyumri in 1951. He graduated from the Komitas State Conservatory of Yerevan as a composer /Professor G.Yeghiazarian/ and as a violinist /Professor H. Vartantyan/.

He is the author of operas Shooshanig and Caesar, folk opera-ballet Mokats Mirza, 2 ballets Orestes and King Oedipus. Is the author of many concertos, 3 string quartets, and sonatas for various instruments, works for numerous ensembles and chorales, and arrangements for approximately 350 spiritual and popular songs.

From 1987 and 1995, Yerkanyan directed the ancient music ensemble of Armenia "TAGHARAN", guiding the ensemble towards international recognition. From 1995 till 2007 he directed the Koosan choir of the Hamazgayin Educational Social Society of Beirut and later on founded and directed the Hayasdan chamber orchestra and other ensembles.

In the year 2000, he became the music director of Parsegh Ganachian conservatory in Beirut.
Yerkanyan wrote Reflections of Twilight for the flute, clarinet, violin, cello and the piano in 1985. The composition underlines Yerkanian's deep love for expressive sound.

Երվանդ
ԵՐԿԱՆՅԱՆ

«Մայրամուտի ցոլքեր» գործիքային անսամբլի համար
Օդեսայի ֆիլհարմոնիայի ժամանակակից երաժշտության անսամբլ
Գեղ. ղեկավար Ս. Շոլց, Նատալյա Լիտվինովա - ջութակ, Սերգեյ Շոլց – թավջութակ, Մարինա Շլյախտեր - դաշնամուր, Ստանիսլավ Զակորսկի – ֆլեյտա, Վլադիմիր Տոմաշչուկ – կլարնետ

Երվանդ Երկանյանը ծնվել է Գյումրիում 1951թ.: Ավարտել է Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիան իբրև կոմպոզիտոր /պրոֆ. Գ. Եղիազարյանի դաս./ և ջութակահար /դոց. Հ. Վարդանյանի դաս./:

Հեղինակ է «Շուշանիկ» և «Կայսր» օպերաների, «Սոկաց Միրզա» ֆոլկօպերա-բալետի, 2 բալետների «Օրեստես» և «Էդիպ արքա», սիմֆոնիկ նվագախմբի համար գրված սյուիտների այդ բալետներից, կանտատների, 4 սիմֆոնիայի, /2-ը խառը երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար/, գործիքային կոնցերտների / կլարնետի և նվագախմբի համար, ջութակի և լարային նվագախմբի, ջութակի և կամերային նվագախմբի/, 3 լարային կվարտետի, տարբեր գործիքների համար գրված սոնատների, բազմաթիվ անսամբլային և խմբերգային ստեղծագործ-ությունների, ինչպես նաև հայ հոգևոր և ժողովրդական շուրջ 350 երգերի մշակումների:
1987-ից 1995թթ. Երվանդ Երկանյանը ղեկավարել է Հայաստանի հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը, որն այդ տարիներին արժանացել է միջազգային լայն ճանաչման: 1995-2007թթ. աշխատել է Բեյրութում, ղեկավարելով «Համազգային» կրթական-մշակութային միության «Գուսան» երգչախումբը, այնուհետև ստեղծել և ղեկավարել է «Հայաստան» կամերային նվագախումբը և այլ համույթներ: 2000-ից Բեյրութի «Բարսեղ Կանաչյան» երաժշտանոցի տնօրենն է:
«Մայրամուտի ցոլքեր» երկը գրված ֆլեյտայի, կլարնետի, ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար ստեղծվել է 1985թ.: Այստեղ ցայտունորեն դրսևորվել է Ե. Երկանյանի հատուկ սերը հնչերանգի արտահայտչականության հանդեպ:

www.naregatsi.org

Ruben
SARGSYAN

"Confessions of Survivors of Der Zor" for chamber orchestra
"Alan Hovhannes" Chamber Orchestra
Meroojan Simonian – conductor

RUBEN SARGSYAN was born in Yerevan in the year 1945. He graduated from the n Komitas State Conservatory of Yerevan as a composer /Professor Gh. Saryan/.

Sargsyan is the author of 4 concertos for the violin and chamber orchestra, 3 concertos for the cello and chamber orchestra, 3 symphonies for large orchestras. Sargsyan has also composed music for ensembles of unique formation and sonatas for the violin, cello and the piano.

The history of the Armenian nation which progresses and changes with the problems of the world, the tragic deterioration of ancient ideals and the acute need to resurrect them are reoccurring themes in Sargsyan's music.

The September Requiem written in the year 2002, What Was Left ...., and Mass of the Phantom are works that tackle such existential themes and capture the attention of the audience.

Confessions of Survivors of Der Zor was written in conjunction with the 90th anniversary of the Armenian Genocide.
The Alan Hovhannes chamber orchestra, conductor Meroojan Simonian has presented this composition many times and with great success.

Ռուբեն
ՍԱՐԳՍՅԱՆ

«Դեր Զոր վերապրածի խոստովանանքը» կամերային նվագախմբի համար
«Ալան Հովհաննես» կամերային նվագախումբ
դիրիժոր՝ Սերուժան Սիմոնյան

Ռուբեն Սարգսյանը ծնվել է Երևանում 1945թ.: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը /պրոֆ. Ղ. Սարյանի դաս./:

Միանգամից սկսել է դիմել խոշոր ժանրերի, հատկապես աչքի ընկնելով իր գործիքային կոնցերտներով՝ ջութակի և կամերային նվագախմբի /4 կոնցերտ/, ինչպես նաև թավջութակի և կամերային նվագախմբի /3 կոնցերտ/: Հեղինակ է մեծ նվագախմբի համար գրված երեք սիմֆոնիաների, մի շարք անսամբլային յուրատիպ կազմերի և ծրագրային բնույթի կամերային նվագախմբի համար գրված ստեղծագործությունների, ջութակի, թավջութակի և դաշնամուրի սոնատների: Նրա երկերի թեմաներն են հայ ժողովրդի պատմությունը, որն այսօր էլ զարգացման մեջ է, սրընթաց կերպով փոփոխվող աշխարհի խնդիրները, նախկին իդեալների ողբերգական խաթարումը և դրանց վերածննդի անհրաժեշտության սուր գիտակցումը...
Այդպիսի ստեղծագործությունների թվին են պատկանում 2002թ-ի գրված «Սեպտեմբերյան ռեքվիեմը», «Այն, ինչ մնաց...», «Պատարագ ուրվականի համար»: Նրա երաժշտությունը ուղղակիորեն հասցեագրված է ունկնդրին՝ հայցելով և ստանալով նրա ուշադրությունը:
«Դեր Զոր վերապրածի խոստովանանքը» գրվել է Եղեռնի 90-ամյակի կապակցությամբ: Ողբերգությանը հաղորդակից լինելը կոմպոզիտորի կողմից արտահայտվել է ստեղծագործության վերնագրի մեջ «Խոստովանանք»... Այո, նա, կարծես այն մարդկանցից է, ովքեր վերապրել են անապատում սահմռկեցուցիչ զրկանքների դժոխքը:
Ստեղծագործությունը մեծ հաջողությամբ մի քանի անգամ կատարել է «Ալան Հովհաննես» կամերային նվագախումբը՝ Սերուժան Սիմոնյանի ղեկավարությամբ:

www.naregatsi.org

Vahram
BABAYAN

"Hymn" based on the theme B-A-C-H (opus 123)
for piano and string orchestra
Vahram Babayan – piano, "Alan Hovhaness" Chamber orchestra
Meroojan Simonian – conductor

VAHRAM BABAYAN was born in the year 1948. He graduated from the Komitas State Conservatory of Yerevan as a composer /Professor G. Yeghiazaryan/ and a pianist /Professor V. Aharonyan/.

Babayan wrote his first serious piece when he was 6 years old and at 9 years he already was the author of a symphony for a string orchestra. Babayan composed works in all genres; 6 operas; The Foreigner, Beethoven's Letter, Hamlet, Liramlarum, Songs of Love and Beauty, 40 Days of Musa Dagh- 4 ballets; Pygmalion, Pan, Toward the Light (premier in 1995 in Baltimore, USA), The Little Prince- 2 oratorios; Christ Speaks and From the Life of Christ- 9 symphonies, 2 symphonic poems, numerous concertos (5 of the piano), 2 chamber symphonies, a symphony for percussions, 3 chorale symphonies, pieces for a string orchestra, 7 string quartets, a piano quartet, a brass quintet, a piano trio, many sonatas for various instruments (7 for the piano), vocal series, music for children and more.

Hymn based on the theme B-A-C-H (opus 123) was written for the piano and a string quartet by the request of the Bach 2000 International Music Festival held in Germany in 2000. The piece was first performed that same year in Grimma, Germany by the Allan Hovhannes orchestra and the author and was a great success. Other performances followed in South Korea, USA and Armenia.

Hymn can be described as a one piece concert. It is a dynamic composition featuring a progression of states. The gradual growth of the main theme leads to a powerful culmination which is followed by a well reasoned conclusion and an ending full of peaceful infinity.

www.naregatsi.org

Վահրամ
ԲԱԲԱՅԱՆ

«Հիմն» B-A-C-H թեմայով դաշնամուրի և լարային նվագախմբի համար (opus 123)
Վահրամ Բաբայան – դաշնամուր և «Ալան Հովհաննես» կամերային նվագախումբ
դիրիժոր՝ Մերուժան Սիմոնյան

Վահրամ Բաբայանը ծնվել է 1948թ. Երևանում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիան երկու մասնագիտությամբ՝ կոմպոզիցիա /պրոֆ. Գ. Եղիազարյանի դաս./ և դաշնամուր /պրոֆ. Վ. Ահարոնյանի դաս./:

Առաջին լուրջ ստեղծագործությունները գրել է 6 տարեկանում, իսկ 9 տարեկանում՝ Սիմֆոնիա լարային նվագախմբի համար: Ստեղծագործում է բոլոր ժանրերում. 6 օպերա՝ «Օտարականը», «Բեթհովենի նամակները», «Համլետ», «Liramlarum»", «Երգ սիրո և գեղեցկության մասին», «Մուսա լեռան 40 օրը», 4 բալետ՝ «Պիգմալիոն», «Պան», «Դեպի Լույս» /պրեմիերան՝ 1995թ. Բալթիմորում /ԱՄՆ/, «Փոքրիկ իշխանը», 2 օրատորիա՝ «Քրիստոսը խոսում է», «Քրիստոսի կյանքից», 9 սիմֆոնիա, 2 սիմֆոնիկ պոեմ, բազմաթիվ կոնցերտներ /5-ը՝ դաշնամուրի համար/, 2 կամերային սիմֆոնիա, Սիմֆոնիա հարվածային գործիքների համար, 3 երգչախմբային սիմֆոնիա, ստեղծագործություններ լարային նվագախմբի համար, 7 լարային կվարտետ, դաշնամուրային կվարտետ, փողային կվինտետ, դաշնամուրային տրիո, բազմաթիվ սոնատներ տարբեր գործիքների համար /7-ը՝ դաշնամուրի համար/, վոկալ շարքեր, երաժշտություն երեխաների համար և այլն:
«Հիմն» ստեղծագործությունը B-A-C-H թեմայով դաշնամուրի և լարային նվագախմբի համար / opus 123 / Վ. Բաբայանը գրել է 2000թ-ին Գերմանիայի «Բախ - 2000» միջազգային երաժշտական փառատոնի կազմակերպիչների պատվերով: Առաջին անգամ կատարվել է նույն թվականին Գերմանիայի Գրիմմա քաղաքում՝ հեղինակի և «Ալան Հովհաննես» կամերային նվագախմբի կատարմամբ, ունենալով մեծ հաջողություն: Այնուհետև, ստեղծագործությունը հնչել է նաև Հարավային Կորեայում, ԱՄՆ-ում և Հայաստանում:
«Հիմնը» հարում է միամաս կոնցերտի ժանրին: Այն, բազմազան հոգեվիճակների արտահայտությամբ, դինամիկ ստեղծագործություն է: Նյութի /B-A-C-H/ հետևողական զարգացումը բերում է հզոր կուլմինացիայի, որին հետևում է տրամաբանական հանգուցալուծումը և խաղաղ ու անսահմանության ձգտող ավարտը:

www.naregatsi.org

www.naregatsi.org